տարածութիւններն մանրադիտական գործիներով. որովհետեւ սոքա շողացումը կը խափանեն ։ Այս եղանակաւ երեւելին Պէսսէլ գտած է մոլորակին տրամագիծը 6″, 7 երկրէն ունեցած միջին հեռաւորութեան համեմատութեամբ. հեռակէտին վերայ այս տրամագիծը կըլլայ 4″, 6. իսկ մերձակէտին վերայ 12″. գրեթէ առաջինին եռապատիկը ։ Այս թիւերուն միջոցաւ կատարուած հաշիւներով գտնուած է, որ Փայլածուի տրամագիծը երկրի տրամագծին 376 հազարորդն է. կամ 4800 հազարամետր. շրջապատը՝ գրեթէ 15000 հազարս. մակերեւոյթը՝ երկրի մակերեւոյթէն եօթն անգամ նուազ. իսկ ծաւալը 18 կամ 19 անգամ փոքր երկրի ծաւալէն ։

Թէեւ Փայլածուի զանազան տրամագիծներուն մէջ դրական տարբերութիւն մի որոշել կարելի չէ եղած. բայց մի քանի դիտողներ հաստատած են, որ նորա ձեւը կանոնաւորապէս գնտական չէ. այլ երկրի և ուրիշ մոլորակաց ձեւերուն պէս ձուակերպ, կամ ճնշեալ է ։ Մոլորակի արտաքին երեւոյթներուն վերայ այսքանը բաւական համարելով յաջորդով պիտի խօսիմք նորա բնական կազմութեան մասին ։

(Շարունակելի։)

ՔԱՂԱՔԱԿԱՆ

(Շարունակութիւն. տես թիւ 8. 1876.)

Օսմանեան կայսր Սուլթան Մահմուտ Բ. որքան որ այս տարի բոլանդակ Ռամիի ագարակը ժամանակ անցուց, այլ Սեաւ ծովու նեղուցն ամրացնելու ստիպողական հարկը բռնադատեց զինքն կայսերական գնդաւ Վառփորի ծովեզերքը փոխադրել, այն է Պօղազ իչի. վասն որոյ Զիլգատէ ամսոյ 8ին անտի մեկնելով կայսերական շքով իւր հետ ունելով նաւիրական դրօշը Թարապիայի կողմն անցաւ, և Խասրով փաշայի ծովեզերեայ ապարանքը իջեւանեցաւ ։ Ռուսք Սեաւ ծովուն եզերաց և մանաւանդ Օսմանեան պետութեան սահմանակից Շիլէի և այլ տեղեաց վերայ բռնանալով մեծամեծ վնասներ կուտային, մինչ զի համարձակեցան Պէնտէրի և Քիլիի ծովեզերքը շինուած կայսերական քոշկէթը հնարիւք այրել ։ Վասն որոյ օգնութեամբ Արարչին կայսերական նաւախումբը Զիլգատէ ամսոյ 16ին չորեքշաբթի օրը առագաստները պարզելով լի հողմով դէպ 'ի Սեաւ ծովը նաւեց գնաց ։

Ի սմին ժամանակի Պարսից տէրութեան դեսպանը ժամանեց 'ի Կ. Պօլիս. և Բ. Դուռը երթալով դաշնադիր լինել առաջարկեց ընդ Օսմանեան Պետութեան, և վրէժխնդիր լինիլ հասարակաց թշնամւոյն, և որոշում եղաւ անդ միշտ միաբան և դաշնակից մնալ ընդ միմեանս թէ 'ի պատերազմի եւ թէ 'ի խաղաղութեան, և այս դաշինքը Պարսից առեանը հաստատելու համար, Բ. Դռնէն Թիպի էֆէնտին դեսպան ղրկուեցաւ 'ի Պարսկաստան ։

Յաղթութեան չուր կայսերական բանակէն, Ռուսաց ֆրգաթոնին բռնուիլն, Իսլամ զօրաց ցիրուցան փախուստն, Ռահվայ աւանին առումն, Անգղիոյ եւ Գաղղիոյ դեսպանաց գալուստը:

Մեծ Նպարքօսն բազմութեամբ զօրաց ճամբայ ելաւ կայսերական բանակին կողմերը գտնուած Ռուս զօրաց

digitised by A.R.A.R.@

դիրքը և նոցա հանգամանքը զննելու մտոք. և յանկարծ Ռուսաց վեց հազարի չափ զօրաց պատահելով, քաջութեամբ նոցա վերայ յարձակեցան, և օգնութիւն հասեալ 'ի Տեառնէ չորս հազար զրք 'ի սայր սուսերի կոտորեցին անխնայ. չորս թնդանօթ և եօթը վառօթի կառք առին, և շատ մի գերի բռնելով յաղթանակաւ Շումլուի կողմը դարձան։ Ինչպէս որ յառաջագոյն գրեցինք, կայսերական նաւախումբը Վոսփորի նեղուցէն ելլալ Պէնաէրի լճակը մտաւ, և այն կողմը Ռուսաց ֆրկաթոնի մը պատահելով օգնութեամբ Տեառն զայն ձեռքակալեցին, մէջը գտնուած զրքը գերի վարեցին և բովանդակ կազմածոց և կարասեաց տիրեցին։ Ի սմին ժամանակի կայսերական բանակին մեծի վեզիրի փոխանորդին փոփոխութիւն եղաւ։ Փկրավատիի կողմերը գտնուած Ռուսաց զրքերը վանելու և հեռացընելու դիտմամբ, մեծ Եպարքոսը բաղմութեամբ զօրաց այն կողմ գնաց. և երբ Կի-լիֆէի կիրճը հասաւ, յիշեալ զօրաց հետ պատերազմի սկսաւ, և օրէն աւելի անընդհատ պատերազմ եւ պայքարը տեւեց, մինչ զի զօրաց աղաղակը եւ գոչիւնը զերկիր կը դղրդեր. այս պատերազմին Օսմանեանք արիութեամբ մեծամեծ քաջութիւններ ցուցին և Ռուսաց զօրքերէն շատ քաջեր ջարդեցին. սակայն ստուգածային անքննելի տնտեսութեամբ վառօթի կառքերը բռնկելով յանկարծակի մեծ ճայթմամբ բորբոքեցան, և Իսլամ զօրաց շատերը մեռան և մնացեալները ցիրուցան փախստական եղան, և յակամայից շատ մի թնդանօթներ եւ ուրիշ կարասիք պատերազմի դաշտը թողով Շումլի վերադարձան։ Գարապուվայի Ռուսաց զօրքը Դանուբ գետը անցան եւ Բահչայ աւանին վերայ քաղեցին, և անմիջապէս անոր տիրեցին. և որովհետեւ նոյն տեղը կարի կարևոր էր Օսմանեանց, ուստի Աղէքսանդրիոյ կուսակալ Մուստաֆայ փաշայ, որ բազմութեամբ զօրաց Վիտինի կողմն պիտի երթար, նորա յանձնեցաւ յիշեալ աւանը թշնամւոյն ձեռքէն վերստին կորզել։

Մոռայի խնդիրը կարգադրելու համար Անգղիոյ և Գաղղիոյ դեսպանաց գալուստը, Կ. Պոլսոյ միւս տերութեանց դեսպանները յառաջագոյն ծանուցած էին. այս եղանակաւ սոքա Զիլիէճէ ամսոյ 15 ին Միջերկրական ծովուն նեղուցը հասան, և թոյլտուութեամբ՝ հակառակ օրինաց քանի մի պատերազմական նաւերով ներս մտան և մայրաքաղաքը հասան, որովհետեւ Գաղղիոյ դեսպանը Կ. Պոլսոյ նախկին դեսպանն էր, անոր ընդունելութեան զօրահանդիսի պատրաստութեան պէտք չունէր. բայց Անգղիոյ Դեսպանը 'ի պաշտօնէ Բ. Դուռը հրաւիրեցաւ, և շարաթէ մի զկնի, որովհետեւ կայսերական գունդը Վոսփորի ծովեզերքն էր, Պէյոյ-ի-պէրէ կոչեցեալ տեղին կայսերական զօրահանդիսի մեծ պատրաստութիւն եղաւ, եւ այսպիսի շքեղութեամբ Անգղիոյ դեսպանը Սուլթան Մահմուտ արքային ներկայացաւ։

ՌՃԼՀ (1831) Ռուսական պատերազմ դէպքերը։

Կարմոյ բերդին առումը եւ ուրիշ պատահմունքներ։

Տարիէ մի 'ի վեր արեւելեան բանակի զօրաց պիտոյքը ամեն պարագայիւք կատարելապէս հոգացուէր եւ պատրաստուէր էր, և Սեբաստիոյ կու-

digitised by A.R.A.R.@

տակով Հաճգի փաշան բազմութեամբ զօրաց Կարինէն Սողանլէ կոչուած լեառ խրկուած , և ապ սպարապետ Սալէհ փաշան ալ բաւական զօրքով Կարինէն դուրս Հասան Ղալէի կողմը գնացած էր ։ Սակայն երբ նոյն բերդին շրջակաները Սպարապետին վրայ Ռուսաց զօրքը արշաւեց , եւ անմիջապէս պատերազմը սկսաւ . փութով Հաճգի փաշայի բանակը սուտ համբաւ տարածուեցաւ , թէ Սպարապետին բանակը բոլորովին պարտեցաւ և զօրքը ցրուեցաւ , և այս սուտ համբաւէն խաբեալ Սողանլէի բանակին բոլոր զօրքը , առանց պատերազմելու անձնատուրեցին փախչիլ , եւ Հաճգի փաշան կալանաւորեալ գերի ինկաւ , և այս ձախողակի դէպքին վրայ Սպարապետը ստիպուեցաւ 'ի Կարին դառնալ ։ Բայց Կարնոյ բնակիչք՝ իրենց անարգ և յողդողդ բնաւորութեամբ սատանեալ մտօք Կարնոյ բերդը Թշնամւոյն ձեռքը յանձնեցին , ուստի Սպարապետ Սալէհ փաշան Կարնեցի Օսման փաշան , եւ միրմիրաններէն Ահմէտ և Ապտիւլլահ փաշաները եւ արեւելեան ռումելիկալ Նաղիֆ էֆէնտին այլովքն հանդերձ կալանօք գերի վարեցան ։ Այս ամէն արկածները Կարինէն Կ. Պօլիս գրով ծանուցին ։ Իսկ նորա անմիջապէս արեւելեան ըսպարապետութիւնը Տրապիզոնի Օսման փաշայի Սպարապետութեան կցորդեցին , եւ նախկին Սպարապետ Սալէհ փաշայի վերայ մնացած Կայսերական հանքայ տեսչութիւնը և Պօլու-Գէ գաւառն ալ աւելցնելով՝ յիշեալ Օսման փաշային յանձնեցին ։ Սեբաստիոյ եւ Կարնոյ գաւառները եւ արեւելեան բանակին յառաջապահութիւնը (Չարգաձըլըք) , Տրապիզոնի նախկին կուսակալ Հասան փաշային , որ Գարահիսար նստած էր ։ Տիգրանակերտի և Եդեսիոյ գաւառները Անդրիանուպոլսոյ նախկին կուսակալ Եահեայ փաշային . Եւ այս կարեւոր անօրէնութիւնները ընելէն զկնի , իւրաքանչիւրոց պատուէր հրամանի գրեցան , զի այն կողմերը գտնուած ամենայն Իսլամք՝ որոնք կարող են զէնք շարժել փութապէս հաւաքանել 'ի բանակատեղին , և միադամայն գուն գործել օգնականութեամբն Աստուծոյ միաբան սիրով գործել ։

Աստանօր հարկ կը համարիմք մեր կողմէն աւելցնել Կարնոյ և Տարօնոյ մէջ այն միջոցին պատահած ազգային ցաւալի դէպքերը ։ Այն թուականին Կարին և նորա շրջակայ սահմանները բնակող Հայերը թողին իրենց հայրենի բնագաւառը , կալուածները և ստացուածները , և գաղթեցին Ռուսաց սահմանը առաջնորդութեամբ Կարապետ Արքեպիսկոպոսի Առաջնորդի իւրեանց եւ բնակեցան Վրաստանի սահմանին մէջ Ախլցխայ քաղաքը ։ Թէպէտ Հայոց այս գաղթականութիւնը 'ի սկըզբան մեծամեծ վնասուց պատճառ եղաւ , եւ շատերը օդոյն անյարմարութեան մեռան , և շատք եւս կամեցան վերըստին 'ետ դառնալ , այլ Հայոց այս բաղձանքը Կառավարութեան կողմէն փութով խափանեցաւ , և կային մնացին նոյն քաղաքը և յայլ տեղիս ընդ իշխանութեամբ Ռուսաց ։ Այս գաղթականութեան ատեն յանուն Կարնոյ Եկեղեցւոյ և Երուսաղէմի Ս. Աթոռոյն կտակեալ կալուածոց գրեանքն 'ի միասին տարած են , չգիտեմք ինչ նպատակաւ , որ յետոյ նոյն կալուածոց կարգադրութեան համար մեծամեծ դժուարութիւններ պատահեցաւ ։

Այն ժամանակիս պատահեցաւ Տարօնոյ Գլակայ սուրբ Կարապետի վանքի կողոպտումը Քրդաց կողմէն , որոյ վերայ քանի մի տարի յառաջ տեղեկութիւն խնդրած էինք տեղւոյն պատը-

digitised by A.R.A.R.@

արժան միաբաններէն, որ և շղթայն մեզ հաղորդել սակաւ տեղեկութեամբ յափշտակուած եկեղեցական անօթոց եւ այլ կարասեաց ցանկովն։ Այս ցանկը գրուած է 1828 Օգոստոս 15ին, երբ Վարդան վարդապետ եկեղեցւոյ անօթները կը յանձնէ լուսարարին, այժմ սոյն դէպքը կորուսեալ իրաց ցանկովն արժան կը համարիմք առ 'ի հրատարակութիւն։

Ռուսաց արշաւանքը, և նոյն ժամանակի խառնաշփոթ դէպքերը, առիթ տուին Տարոնոյ գաւառին աւազակաբարոյ Քրդաց կատաղութեան, և իրենց այս յոսումբ փութացին թափել երկրին տարաբաղդ հայոց գլուխը, կողոպտելով եւ խլելով յընչից մերկացնելով։ Նախ յարձակեցան Պուլանուխայ, Զըշուրայ, Խնուսայ, Մանդկերաւ, Վարդոնցայ, և Մշու դաշտի վերայ, և աւարի առնելով կողոպտեցին ամէն բան, վարեցին ապա արջառս ոչխարս և նախիրս յանդէոց, իսկ բընակիչք այսր անդր ցիր ու ցան փախստականն լինելով հալիւ կարացին իրենց անձը ապրեցնել. այլ վայրենի Քրդաց բանակը այս քանս երբեք բաւական չհամարեցին, զի իրենց սրտի մթերեալ դառնութիւնը կամէին թափել Ս. Կարապետի վանաց և միաբանութեան վրայ, որպէս թէ նոքա առիթ եղած են աշխարհիս այսքան խռովութեան. ուստի լի ցասմամբ դիմին բաղմութեամբ վանքին վրայ, և ամէն կողմէն պաշարելով զինու զօրութեամբ ներս մտան, զի միաբանք յահէ նոցա 'ի գիշերի խոյս տուած էին, վասն որոյ աւազակները առանց երկիւղի և կասկածանաց սկսան բոլոր դաբանները և պահարանները քննել եւ որոնել։ Սուրբ Կարապետի վանքը հինգ տեղ եկեղեցւոյ մէջ ծածուկ պահարաններ ունէր, որոց երեքն միայն գիտէին միաբանք, իսկ երկու պահարանները միայն նախկին լուսարարը գիտէր, որ արհեստիւ ոսկերիչ գողով ձեռքը հասած արծաթ և ոսկին հալեցնելով այդ երկու պահարանները լեցուցած էր։ Իսկ ինքն ժամանակէ մի յետոյ Վենետիկ երթալով անտի կը գրէ, եթէ սուրբ Կարապետի վանքը հիմնովին քանդուի, այն երկու պահարանաց մէջ եղած հարստութիւնը, նոր 'ի նորոյ փառաւոր կերպիւ կը շինէ, և ինքը անդ կը մեռնի, թէպէտ միաբանք շատ աշխատութեամբ որոներ են, այլ չեն կարողացած գտնալ. իսկ աւարառու Քրդաց վոհմակը խիստ փութով գըտան և այն մեծ հարստութիւնը, որոյ մէջ հնութիւններ ալ կային. եկեղեցւոյ և վանքին ուրիշ անօթներուն հետ փութով դատարկեցին, եւ այնպիսի կերպով մերկացուցին եթէ հընար լիներ քարն և հողն անգամ պիտի տանէին, եկեղեցւոյ խաչկալներն եւ պատկերներն ամբողջ ջարդեցին, որմերը և սիւները շատ տեղերէն ծակեցին գանձ գտնալու տենչանօք։

Ահաւասիկ եկեղեցւոյ անոնց ցանկը։

1	Մեծ պատկեր սուրբ Կարապետի.	արծաթ.
1	Մեծ պատկեր սուրբ Աստուածածնի.	„
1	Փոքր պատկեր Տէրունական	„
1	Մեծ գոգնոց գերեզմանին.	„
1	Մեծ գոգնոց Աւագ խորանին.	„
3	Գոգնոց սեղանի ղպպրալէ	„
1	Մեծ տապանակ 8 սիւնով	„
11	Գաւազան	„
1	Փոքր սեղանի տապանակ	„
236	Կանթեղ.	„
1119	Խաչ.	„
70	Ձեռաց խաչ.	„

digitised by A.R.A.R.@

4 Մեծ խաչ 'ի չափ հասակի մարդոյ . արծաթ
1 Զոյգ աշտանակ 'ի դուռն գերեզմանի . ”
1 Մեծ ջահ . ”
4 Լէկէն . ”
5 Իպրիք (ստոման) . ”
3 Փուլ գերեզմանի դրան . ”
9 Ապանոս գաւազան, գլուխքն ”
6 Խաչ եպիսկոպոսի պարանոցի ”
14 Ժամարարի կամար . ”
13 Ձեռաց տապանակ . ”
1 Խնկաման . ”
1 Զոյգ աշտանակ . ”
13 Աղաւնի Միւռոնի . ”
18 Բուրվառ . ”
14 Քշոց . ”
2 Դալիպ . ”
56 Սկիհի հասարակ ծածկոց . ”
168 Սկիհ մաղզմայիւք .
47 Մաղզմայ առանց սկիհի .
17 Սաղաւարտ վակասով .
3 Սաղաւարտ ղուպարալէ .
18 Վակաս ոսկեթել բանած .
21 Արծաթապատ Աւետարան .
11 Աւետարան ղուպարալէ .
27 Արծաթեայ մասունք ամանով .
7 Աջ արծաթեայ .
5 Մասունքի տուփ .
34 Մասունքի ճորտեր .
3 Ոսկի կանթեղ .
2 Ոսկի սկիհ մաղզմայով
1 Դալիպ իբր ոսկի .
14 Միջակ լեկէն .
118 Շուրջառ լաւ և ստոր .
184 Ընտիր շապիկ .
76 Ճերմակ և չիթ շապիկ .
67 Սկիհի լաւ ծածկոց .
45 Զոյգ բազպան .
40 Ուրար սարկաւագի .
9 Գերեզմանի ծածկոց ղուպարալէ .
7 Վարագոյր գերեզմանի դրան .
21 Զոյգ հողաթափ բանած .
28 Եպիսկոպոսի թագ վակասով, բանած .
8 Եմիփորոն .
6 Կոնքեռ .
36 Սեղանի ծածկոց .
6 Սեղանի մեծ վարագոյր .
4 Վարագոյր ոսկեթել բանած .
11 Չիթ վարագոյր .
2 Հնդկաստանի մեծ վարագոյր ,
6 Գերեզմանի դրան պատկերի վարագոյր .
12 Սեղանի քառափորայ (մարմինակալ)
123 Սեղանի շրթունք .

Այս է եկեղեցւոյ անօթոց տումարն որոնք ամբողջ յափշտակուած են ։

2000 Հատոր գիրք ձեռագիր և տպեալ .
2000 Պղնձեայ սեղան սինի .
100 Անկողին իւր սարքք .
300 Պղնձեայ աշտանակ .
100 Կարպետ .
1000 Ոչխար և այլ կենդանիք .

Կը մնայ արդ գիտել թէ վանքին մագաղաթեայ և հին ձեռագիր մատեանները ինչպէս կաթսաներուն մէջ լեցունելով խաշեցին . ջուրերու և այլ անյայտ տեղեր կորսնցուցին , և այնքան պղնձեղէնները ինչպէս տարին , և մատաղի համար շինուած մեծամեծ կաթսաները ինչպէս կացիններով ջարդեցին , և թէ որպէս յայլ և այլ տեղեր մինչեւ այգիներու մէջ պահուած եւ թաղուած կահ կարասիքը գտան հանեցին , և այնքան ժամանակէ 'ի վեր այնպիսի հարստութեամբ եւ ճոխութեամբ և ամենայն պիտոյիւք լցեալ վանք մի , փոքր ժամանակի մէջ յաւեր և յապականութիւն դարձուցին , մինչեւ պատուհանաց երկաթեայ վանդակները կոտրել հանել , և թէ ինչպէս եպիսկոպոսները և միաբանները մերկացնելով խայտառակեցին , որոնք ըստիպուածէին իրենց մերկութիւնը խո-

digitised by A.R.A.R.@

տով ծածկել, մինչեւ Մշոյ ժողովրդոց օգնութիւնը հասաւ։ Եւ թէ որպէս Քրդաց պէյը (ինչպէս կը պատմեն միաբանք) իւր նժոյգը նստելով եպիսկոպոսական թագը գլուխը կը դնէ, շուրջառը վրան և գաւազանը ձեռքը առնելով ծաղրածութեամբ կ'ըսէ, «Ահա ես եղայ Մարտիրոս եպիսկոպոս» եւ այլ ասոնց նման իրաց վերայ մանրամասն տեղեկութիւն չունենալով հարկ կը լինի լռել, մինչեւ ժամանակը յայտնէ, այլ թէ ինդիրն ի վերջոյ ինչ վախճան ունեցաւ, Պօլսոյ Պատրիարքարանի բողոքը ինչ աղդեցութիւն գործեց, դարձեալ կը մնայ մութ, այլ այսքան միայն թէ զկնի խաղաղանալոյ աշխարհին քանի մի բան Քուրդերէն ետ առած են, որոնք են,

3 Սեղանի վարագոյր.
10 Սկիհ մաղմայով.
1 Արծաթեայ աշտանակ.
1 Արծաթեայ ջահ.
15 Կանթեղ.
200 Խաչ.
100 Հատոր գիրք։

(Շարունակելի։)

Նոր գտնուած հին դիւակ մը.

Եդեսիոյ շրջակաները քաղաքէն երկու ժամու հեռաւորութեամբ Հայաբնակ գիւղ մը կայ, որ ունի հին Եկեղեցի մի. ըստ աւանդութեան՝ տեղացւոյ Ս. Թադէոս և Բարդուղիմէոս Առաքելոց ժամանակէն մնացած է. սոյն Եկեղեցւոյ հիւսիսային կողմը մի փոքրիկ ճգնատեղի կայ, ուր կ'ելնուի Եկեղեցւոյ պատին մէջ հաստատուած մի քանի աստիճան քարէ սանդուխով։ Անցեալ տարի տեղւոյն բնակիչք նոյն Եկեղեցին՝ մի քիչ ընդարձակելու նպատակաւ երբ այդ ճգնարանը քակելու կը ձեռնարկեն և սալայատակի քարերը կը վերցնեն, մի գերեզման կը բացուի, որոյ մէջ պառկած կը տեսնուի մի սեւազգեստ և մօրուաւոր ամբողջ դիակ. մարմնոյն ոչ մի յօդուածը իրարմէ չէ բաժնուած եղեր, և ոչ զգեստներն՝ մաշուած կամ ապականուած. սակայն երբ ձեռք կը զարնեն, մարմնոյն յօդուածները կը սկսին իրարմէ բաժնուիլ եւ հանդերձներն ալ պատռտիլ. կ'աշխատին որչափ կարելի է, անքայքայ վերցուցնելով իւր տեղէն Եկեղեցւոյ մատռան մէջ փոխադրել. յետոյ գերեզմանը փորելով կը գտնեն հետեւեալ վկայականը։

Օրինակ Վկայականի.

Ի Տեառնէ ամենակալէ և յամենայն Սրբոց սորա 'ի Ղուկաս վարդապետէս հասցէ գիրս աւրհնութեան և պահպանութեան, եւ առաքելական աւրհնութիւն ընդհանուր ամենայն աղդիս քրիստոնէից, Տ. Երջանիկ բարեբարեպատցդ, Առաքելաշնորհ արհի Եպիսկոպոսացդ, սրբասէր և մաքրամիտ քահանայիցդ, հաւատարիմ եւ բարեպաշտօն տանուտերանցդ, արքայաշուք և մեծահամբաւ խոճանուդ, առատամիտ և իմաստուն վաճառականացդ, ձեռնահմուտ և հանճարեղ արուեստաւորացդ, քրտնաջան և աշխատասէր երկրագործացդ, Աստուածասէր եւ երկիւղած կանանցդ. Համեստ և հոգի ոչ (1) տանտիկնացդ, և ա-

(1) Սոյն բառը, ինչպէս և վարը մէկ բառ՝ նոտը գրով նշանակեցինք. որովհետեւ անհասկանալի են. չեմք գիտեր թէ բնագրին մէջ այդպէս է, թէ ընդօրինակողը սխալ ընդօրինակած է։

digitised by A.R.A.R.@